


Ա Ր Ա Գ Ի Ր

Ա Ր Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Յ Ե Ր , Բ Ե Լ Մ Բ Ե Ր , Վ Ե Վ Ե Ր
Ե Ւ Վ Ե Վ Ե Ր


Վ Ե Վ Ե Ր Ո Շ Տ Ա Ր Ե

Հ Ր Ե Ր Մ Խ Ե Մ Ե Ը Ը



Յ Ե Ր Ո Շ Տ Ա Ր Ե Ր
Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Մ Ո Ջ Յ Ա Կ Ո Վ Ե Ր Ա Ն Ց

1871



Ա Խ Ո Շ

Ա. Ե Յ Ե Ր Ա Ր Ա Տ Տ Ա Ր
Թ Ա Ւ 6.

Ա Մ Ս Ա Գ Ի Բ

ՅՈՒՆԻ 30.
1871.

Ա Զ Գ Ա Յ Ի Ն , Բ Ա Ն Ս Ա Ւ Ր Ա Կ Ա Ն Ե Ւ Գ Բ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Ս Ա Մ Ս Ա Բ Ա Յ Ի Ն

Դ Հ - Ե . Ճ . 29-37.

Ե կ ո՞ւ է իմ ընկը ո այսպէս կը
հարցնէր երբեմն Փարիսեցի օրինա-
կանը : Ե յս հարցումը տարօրինակ
կ'երեւի մեղ այսօր , և ով որ նոյ-
նը կրկնէ ներկայ ժամանակիս մէջ ,
ամօթահար կը լինի մարդկանց առ-
ջեւ : Եւ սակայն այն դարուն մէջ ,
երբ օրինականը սոյն հարցումն ար-
տասանեց , ոչ միայն ամօթ ք համա-
րեցաւ , այլ պատիւ : Օրինականը
այսպիսի հարցումն առաջարկելով երկ-
նաւոր Վարդապետին՝ յուսացաւ ե-
րեւիլ արդար և լիսակատար օրինա-
պահ : Հարցընելով թէ՝ “ Ո՞ւ է իմ ըն-
կը ” , կարծես թէ կ'ուզէր ասել . “ Ես

ք կամիմ բնաւ զանց առնել , արհա-
մարհէլ և մոռանալ զոք , այլ կը փա-
փարիմ ամեն մարդ սիրել իբրեւ ըն-
կեր , որ արժանի է սոյն կոչմանը :
Թէպէտ յայտնի է որ կարող չեմ ա-
մեն մարդ ընկը անուանել , բայց շատ
կը ցաւիմ , եթէ նոյն կոչումը զա-
նամ այն մարդուն , որուն պարտա-
ւոր եմ : Եսա ինձ , ուրեմն Վարդա-
պետ , ո՞ւ է իմ ընկըն , որպէս զի և ես
ողջունեմ զնա իբրեւ ընկեր և վա-
րսիմ նորա հետ իբրեւ ընկեր ո :

Թէ ինչ խորութիւն կոյ նոյն
դարուն և ներկայ դարուն մէջ , թէ
ինչ տարբերութիւն կոյ օրինականի

Հարցման և մեր Փրկչի պատասխան՝
ոյն մէջ, և թէ ինչու նոյն դարու
մարդը պատիւ կը համարէր սոյն հար-
ցումը արտասանել և այժմեան մարդը
կը պատկառի նոյնը կրկնել. այս մեծ
անջրպետը մարդկային ազգի պատ-
մութեան ամենամեծ շըջանն է. Իսկ որ
որպէս զի լաւ քննենք և իմանանք թէ
ինչու այն ժամանակ օրինաւոր հա-
մարուած հարցումը, 19 դարերէն
զկնի, բոլորովին անտեղի է այսօր.
Բնական և հարկ է նախ և առաջ
հարցընել՝ թէ ինչ պատճառաւ օրի-
նաւոր կը համարուէր նոյն խօսքը, և
թէ արդեօք ամեն մարդիկ այնպէս
կը խորհէին, ինչպէս կը խորհէր Փա-
րիսեցի օրինականը : Այս կրկնակի
խնդիրը քննել և պարզել կը նշանա-
կէ լիովին ուսումնասիրել թէ ինչ
կը հասկնային մարդիկ ընկը ասելով:
Ավ նշանակէ յատուկ տեսութեամբ
զննել և ուսանիլ մարդկային ազգի
պատմութիւնը, որ սոյն յատուկ կե-
տէն առնելով խիստ կարեւոր է և
խորհրդածութեան արժանի : Ո՞ենք
պիտի պատկերացնենք այս պատմու-
թիւնը, բայց նշանաւոր գիծերը մի-
այն գծելով, և այսքանը բաւ ական
կը համարինք մեր նպատակին հասնե-
լու համար, որ է ակներեւ ցոյց տալ
Յխուսի Քրիստոսի գալստեան և աս-
տուածային վարդապետութեան մի
ամենամեծ աղջեցութիւնը :

Աշխարհիս նախնի դարուց մէջ,
մինչդեռ մարդկութիւնը խանձարըց
մէջ էր տակաւին, մարդոյ մոքէ ան-
ցած չէր բնաւ այս հարցումն . « Ո՞վ
է իմ ընկերու ։ Աստուած մէկ արիւնէ
ստեղծելով ամեն մարդիկ, ամենուն
տուած էր մի և նոյն նախահարքը :
Ուարդկութիւնը սերած լինելով մի
զյգ ամոներէ, նկարագրապէս կը
կազմէր մի գերդաստան, Ուարդկային

եղբայրութիւնը ծնունդ էր անձուկ
կապով կապուած եղբայրութեան :
Ուարդիո-Ռիւն կոչուած զգացումը՝ ծը-
նունդ էր ընտանեկան սիրոյ և գործ
վանաց, Ուարդկային սէրը զանգուած
էր ընտանեկան սիրով, այնպէս որ
մարդը կը արդիրէր որպէս մարդ՝ իւր զա-
ւակը, իւր հայրը, իւր եղբայրը եւ
իւր ազգականը : Ի սկզբան ամեն ըն-
կեր՝ ազգական էր, Այսպէս էր ա-
ռաջին մարդոյ կենաց շըջանը, որ կա-
րողացաւ տեսնել իւր գերդաստանը՝
ժողովուրդ եղած՝ և սոյն ժողովրդեան
անդամները, իրենց կենդանի նախա-
հօր առջեւ, ոչ միայն իրբեւ քաղա-
քակից կը ճանաչէին զիրեար, այլ և
իրբեւ ազգական և իրբեւ եղբայր,
Այս սկզբնական հասարակութեան կամ համեզըցրութեան կապը երկար
ժամանակ տեւեց ու զգալի մնաց, և
թէպէտ իւր յիշատակարանները ան-
հետացան, բայց իւր գաղափարը ան-
կորուսու պահպանուեցաւ աւանդու-
թեան մէջ : Ուարդիկ իրարմէ հեռա-
ցան, իրարմէ բամնուեցան, բայց
զիրար ազգակից ճանաչելու նախնի
սովորութեամբ անեղծանելի մնաց այն
զգացումը, որուն յետ ժամանակաց,
Ուարդիո-Ռիւն անունը տրուեցաւ :

Այս կետէն կարող ենք ճանաչել
Աստուծոյ նպատակը և խորհուրդը:
Երբ ասաց Աստուած իւր սպատկե-
րակից ստեղծած արտրածներուն . « Ո՞-
չեցէք և բաղմացարուք, ո ոչ միայն
կամեցաւ երջանկութիւնը առաւե-
լուլ և իւր պատկերը բաղմացընել
երկրիս վրայ, այլ կամեցաւ նաեւ
ստեղծել մի ամենամեծ գերդաստան,
որոյ իւրաքանչիւր անդամները պար-
տաւորութեամբ կապուած լինին,
ինչպէս իրարու հետ, նոյնպէս և ի-
րենց Արարչի հետ :

Ամեն մարդիկ կոչուած էին յամե-

նայն զօրութենէ փառաւորել թէ ամենասուրբ և ամենաբարի Կյոտուածը, յորմէ կարողութիւն և ընդունակութիւն ստացած էին, և թէ օգնել միմեանց իրենց գերագոյն նպատակը լիովին կատարելու համար, որ եր սիրելով զմիմեան՝ փառաւորել զլուստած : Եցն նպատակը և նցն սէրը պէտք է որ կապէր և միացնէր մարդը՝ մարդոյ հետ, գերգաստանը՝ գերգաստանի հետ, ազգը՝ ազգի հետ : Խակ անհատներու տարբեր բընաւորութիւններն ու տարբեր տաղանդները, ցեղերու տարբեր կաղմուածն ու խառնուածը, ժողովրդոց տարբեր գիրքն ու պիտոյքը, ուրիշ նպատակի համար չեն, բայց եթէ աւելի զգալի կացուցանել, որ խւրաքանչեր մարդիկ, խորհրդաւոր կերպով, կախումն ունին իրարմէ, փոխադարձ կարօտութեամբ կապուած են միմեանց հետ և անդադտը պարտաւորուած են միմեանց փոխադարձ օգնութեան կարեւորութիւնն զգալ : Վմեն պէսպիսութիւնք, ամեն գիմազիր յատկութիւնք պէտք է որ ձուլուէին աստուածային անտեսութեան անհուն խորհրդոյն մ.ջ, համօրէն մարդկութիւնը պէտք է որ լինէր իբրեւ մի մարդ : Կյոտո ծայ առջեւ, հազարաւոր եւ բիւրաւոր ձայները պէտք է որ լինէին իբրեւ մի ձայն, իբրեւ մի դաշնակաւոր նուագ, իբրեւ մի անընդհատ օրհներգութիւն երախտագիտութեան և երկրպագութեան :

Վարդկանց առ միմեանս ունեցած սոյն յարաբերութեան մէջ պէտք էր ահա որ աճէր, եւ զօրանար աստուածութիւնութեան և մարդասիրութեան սուրբ զգացումը, այն պքանչելի սէրը կամիմ ասել, որ խապառ տարբեր է ուրիշ ամեն սիրոյ զգացումներէ, երբ անարատ է, երբ պղտղուած չէ մար-

մնասիրութեամբ, երբ զանգուած չէ շահամնլութեամբ, ունակութեամբ, կանխակալ կարծիքով և արեան ուժով և երբ պահպանած է այն յատուկ ամբութիւնը, որ բնաւ ըշկոյ ուրիշ մարմնաւոր յօժարութեանց մէջ : Աթէ, իբրեւ մարդ, շունինք սոյն ամբիծ սէրն առ մարդիկ, ընտանեկան զգացումները, արենական համակրութիւնը և հայրենիեաց խանդը կարող չեն երբէք անասուններէն բարձրացնել զմեզ, և այս մասնաւոր զգացումները այն ժամանակ միայն կարող են սիրոյ սուրբ անունը կրել երբ կատարելագործուած են Հոգւովին Կյոտուծոյ և Ճշմարիտ աստուածութիւններ մարդասիրութեան երկնաւոր հիւթով կազդուրուած և ուռածացած :

Թա՞ղ շրկարծուի բնաւ, թէ մենք դիտաւորութիւն ունինք դատապարտել կամ նուազեցնել այն զգացումները, զորս բնութիւնը ներշնչած է մեզ, և որոնք սահմանուած են աստուածային անհուն խորհրդով, որ նա խորհրծութեան աստիճաններ լինին մեր համար դէպ ՚ի գերագոյն սէրը վերաթեւելու : Կյոտուած կարող էր անշուշտ ամեն մարդ առանձին առանձին ստեղծել ՚ի հողոյ, և յաջորդական նորանոր արարչութեամբ յարատեւել մարդկային ցեղը, բայց չկամեցաւ այսպէս առնել : Վա հաճեցագերգաստանը մարդոյ շուրջը բոլորելեւ իւրաքանչիւր անդամները փոխադարձ կարօտութեամբ իրարու հետ կապել եւ սոյն խորհրդաւոր ազգակցութեամբ՝ ընտանեկան հասարակութիւնը հաստատել : Որդիական, ամուսնական, հայրական և քաղաքակցական՝ սորդար և բնական գորովունքներու մէջէ, որ կը կրթուի, կը բացուի և կը փայլի մեր սիրելու ըն-

գունակութիւնը և կարողութիւնը . Աստուծոյ իմաստութեան և բարութեան յատուկ տնօրէնութիւնն է այս . որ սիրելու մերձաւոր առիթներ եւ ստիպողական միջնուներ մատակարարած է մեզ՝ մեր կարողութեան չափով և մեր որրանին մօտ : Յավշան նէս առաքեան ասաց . “ Եթէ ոք ասիցէ , թէ սիրեմ զի՞ստուած և զեղք բայր իւր ասիցէ , սուտ է . որ ոչ սիրէ զեղքայր իւր՝ զըր տեսանէ , զի՞ստուած՝ զոր ոչն ետես , զիարդ կարիցէ սիրել : ” Ա . Յուլ . Դ . 20 :

Ոչ ապաքէն այս խօսքերը լիովին իրաւունք կուտան մեզ՝ այսպէս ասել մեր կողմէն . — Այն մարդը , որ իւր տեսած և ճանաչած եղբայրները չըսկըրէր , բնչպէս կարող է սիրել այն եղբայրները , զորս ոչ տեսած է և ոչ կը ճանաչէ : Ով որ չըսիրէր այն անհասները , որոց հետ Կամախնամութիւնը կապած է մասնաւոր անձուկ կապով , կարող չէ նա երբէք սիրել այնպիսիները , որոց հետ կապուած է միայն ընդհանուր կերպիւ : Վեր գիտակցութիւնը կը համոզէ զմեզ և կարող ենք առանց տարակուսելու ասել , որ իւր ազգականաց և մերձաւորաց բարեբաղդութեան համար անտարբէր եղող մարդը՝ կարող չէ երբէք անկեղծ օրէն զդալ եւ խորհիլ ընդհանուր մարդկութեան շահը : Ենկեղծ և ճըշմարիտ չէ նաեւ այն արտակեդրոն մարդասիրութիւնը , որ կը ձգտի ազգակցութիւնը թողուլ և միայն հայրենիքը սիրել , հայրենիքն ու ազգը թողուլ և միայն մարդկութիւնը սիրել , կենդանիքը թողուլ և մեռեալ ները սիրել : Ով կարող է երբէք , առանց գերդաստանի ազգ երազել , առանց ազգի՝ մարդկութիւն և առանց կենդանեաց ննջեցեալիքը : Վերը աստիճաններ ունի և սիրոց կա-

տարածին դիմելու համար՝ հարկ է քանի մի սանդուղներ վերոտնել : Վեկտարանը ոչ միայն չըմերձէր , այլև յատկապէս մասնաւոր սիրոց պատուէրներ կ'աւանդէ : Հին և Նոր ուխտի ամեն սուրբերը յարգած և գրկած են մասնաւոր սիրոց կապերը : Կայն ինքն Յիսուս Քրիստոս ցայց տըւաւ իւր անձին մէջ կատարեալ օրինակ որդւոց , բարեկամի և բաղաքակցի : Կա գեղեցիկ տիպար էր ծընզպանիրութեան , բարեկամութեան և հայրենակցութեան :

Եւ սակայն պարտինք խօստավանիք որ ընդհանուր մարդասիրութեան ընդունակութիւնը , կամ , աւելի պարզ ասել , մարդը՝ որպէս մարդ սիրելու կարողութիւնը՝ բարձր է և գերագոյն մեր մասնաւոր սիրոց ամեն գործանքներէն : Որչափ պակաս են սիրոց օժանդակիչ պարագայք , որչափ զերծ է մեր սէրը մասնաւոր յօդիչ առիթներէ շահախնդրութենէ , ունակութենէ , կանխակալ կարծիքէ , արեան զօրութենէ — միուլ բանիւ , որչափ կը զգանք մենք , որ մենք կը սէրենք զմարդ՝ միայն Աստուծոյ կնիքը իւր Ճակտին վրայ ունենալուն և մեր օգնութեանը կարօտ լինելցն համար , այնչափ վեմէ մեր սէրը և արժանի ճշմարիտ սիրոց անուն կրելու . վասն զի անարատ է , վասն զի անբիծ է և անխօսուն : Այր այս եղանակաւ կը սիրենք , յայտ է որ կը սիրենք մենք սրպէս Աստուած , որոց մարդասիրութիւնը ինքնաբուզն է և անպայման և հիմնուած չէ բնաւ յարակից պարագաներու վրայ : Որչափ հոգեւոր է մեր սէրը , այնչափ նման է աստուածացին սիրոցն և աւելի կը մօտեցնէ զմեզ Աստուծոյ և կը միայնէ նորա հետ : Վիտքանիւ , մեր ունեցած մասնաւոր սիրոց շատ կամ սակաւ գորտվանիք .

ներով մենք հաւասար ենք մեզմէն ըստորին կենդանի արարածներուն . խոկ մեր ունեցած ընդհանուր սիրով մենք պատկերակից և սիրակից ենք Վատուժ : Տարակյա չը կայ , որ անասունները առանց գորովանաց չեն և նոցաքանի մի տեսակները խիստ յաշանի են այս մասին . բայց չկայ նոցա մէջ բնաւ՝ սիրոյ այն վեհ և ընդհանուր բեղմնաւորութիւնը , որ յատուկ է միայն հոգեւոր արարածայն , այսինքն մարդոյն : Վայ հոգեւոր սէրն է ճրշ մարիտ սէր : Վայ սէրն է , զոր պարտինք յաւելու մեր ամեն սիրոյ վրայ : Պէտք է որ ամեն մարդ այս սիրով ուսանի սիրել իւր զաւակը , իւր ամուսինը , իւր ազգականը և իւր բարեկամը : Վայ հոգեւոր սէրն է բընական և համակրտկան սիրոյ համեմիչ աղը : Վառնց հոգեւոր սիրոյ , ամեն զգացմունք , ամեն գորտվանք , ամեն սէր , ոչ այլ ինչ են , եթէ ոչ կիբը , տենչանը , ունակութիւն , վարագուրեալ ինքնասիրութիւն , որովք վայրագար կը կրեն սիրոյ գեղեցիկ անունը :

Վմենաբարի Վարիչը կամեցաւ , որ հոգեւոր սէրը լինի մարդկային բնութեան ամենէն փառաւոր գորդը , ամենէն գեղեցիկ կատարելութիւնը , ամենէն պահպանը միջոցը , որով կարենան մորդիկ հանրական միարանութեամբ կատարել իրենց պատուիրած մեծ գործը , որ է փառաւորել զԱստուած Երկրի վրայ : Կը տեսնենք ակներեւ , թէ ինչ պահպանը իմաստութեամբ արմատացուցած և հաստատած է Վատուած սիրոյ զգացումը մարդոյ սրտի մէջ , կը տեսնենք , թէ քանի եղանակներով և քանի միջոցներով ապահոված է այն զգացման գոյութիւնը : Բանի քանի նշաններ , դիմեր և պայմաններ կան , որով մար-

դը պարտաւորուած է ընթիր ճանաչել ամեն մարդ առհասարակ : Վմենքն ունին նոյն կաղմուածքը , նոյն կերպարանքը , նաեւ նոյն կարօտութիւնը , նոյն կախումն , նոյն վառագները եւ նոյն թշնամիքը : Վմենքն ունին հաւասարապէս՝ մտածութիւն , լեզու , խիզք և գիտակցութիւն : Վմենքն ունին կանոն արդարութեան և զգացու մշմարտին : Վմենքն ունին կարօտութիւն ապաւինութեան և հաւատոյ առ Վատուած : Վմենքը կը փափաքին զգայական կեանքէն աւելի լաւագոյն երջանն կութեան : Վմենքն ունին գաղափար անմահութեան և ծարաւ յաւիտենականութեան : Երջապէս , երկիրս անիծուելէն ՚ի վեր , ամենուն զգալին է ապերջաննկութիւնը , ամենքը կը կրեն այս ցաւը և ամենքը արժանացած են պատուիրանազանցութեան դառն հետեւանքներուն Իսոյց աւանդ , որչափ կը նշանակենք այն կէտերը , որովք պէտք է միանային մարդիկ , այն չափ կը մօտինք նոցա մոհաքեր բաժանման եւ անմիտութեան առաջին պատճառին : Ի՞նչպէս կարողէր մարդ իւր Վարազն հեռանալէն զինի , իւր Վարիչը անպատուելէն զինի , յարգելնորա պատկերը և կնիքը արարածի ճակտին վրայ : Իւր անձը Վատուածէ նախապատիւ համարող մարդուն համար ուրիշ ինչ էակ կարող էր սուրբ համարուիլ բովանդակ տիեզերաց մէջ , Ի՞նչպէս կարող էր կենդանի մնալ ընկերի սէրը այն ապականուած սրտին մէջ , ուր ցամքած էր սէրն առ Վատուած : Վարդը , Վատուած մէ հեռանալով , թիւնաւորեց իւր սիրտը այնպիսի յօժարութիւններով , որոնք յարակից են անձնասիրութեան , որտնք մի մասն են ինքնասիրութեան

և այնքան անկախ են կամքէն, որ իս կցն լոկ անասնական բնազդման կ'են թարկեն զմարդ : Երբ մարդն Վատուծմէ հեռացաւ, սկսաւ որպէս անասուն սիրել և ոչ որպէս Վատուած: Երբ աստուածային կնիքը մարդոց ճակտէն ջնջեցաւ, ընկեր անունը եւս ջնջեցաւ, և սոյն բառը կորսնցուց այն իմաստը, զոր սահմանած էր Վատուած: Վարդիկ եղան լոկ նմանակիցներ և ոչ թէ ընկերներ: Հասարակութեան և մարդկային վսեմ միութեան զգացումը պղտորեցաւ, չքացաւ: Դիպաց պատահմամբ միայն երբեմն համօկրութիւն եղաւ այս ինչ կամ այն ինչ անհատներու մէջ, նարդ անունը միայն յարդ ներշնչեց առ մարդ, տառապելցն ցաւալի տեսքը միայն գութու գորով արծարծեց մարդոց սրափ մէջ. բայց ընդհանուրի երջանկութեան փափաքը, հասարակաց կատարելագործութեան իղձը, երկնաւոր Հօր փառաց և նպաստակին համեմատ մարդկային մեծ գերդաստան կազմելու ընդհանուր միտումը և մըրցումը՝ անհետացաւ սրտերէն: Վասն աւոր աննմանութիւններն ու տարբերութիւններն աւելի երեւան ելան, քան թէ նմանութիւնը: Վրտապին վարդ ու բարբ, սովորոյթք, կարծիք տարբեր լեզուք և գոյնք, տարբեր աստիճանք մուաւոր մշտիւթեան, անհաւասարութիւնք աստիճանի և բաղդի, այս առ երեւոյթ դիպուածները ջնջեցին մարդկային հիմնական նմանութիւնը: Վ. յս դիպուածներու մէջ սկսան մարդիկ եղբայրական տիտղոսներ փնտուել քան թէ մի Վրարչի արարած և մի Հօր զաւակ լինելցն մէջ: Վ. յնուհետեւ ընկեր կոչուեցաւ միայն ազգականը, բարբեկամը, դաշնակիցը և երբեմն քաղաքակիցը: Վասն աւոր ընկերութիւնները կարծես թէ

աւելի ամիացան, բայց ոչ այնքան իբրեւ ընկերութիւն, որքան իբրեւ նիզակակցութիւն դաւագրութեան: ՈՒխացան մարդիկ, բայց ոչ այնչափ սիրելու համար, որչափ միասին ատելու համար, Գերդաստանները ամրացան և զօրացան գերդաստաններու դէմ, դասակարգերը՝ դասակարգերու դէմ և ազգերը ազգերու դէմ: Վզգացնկատմամբ մանուանդ կարող ենք նշմարել թէ բնչքան այլայնցաւ, չքացաւ ընկեր բառի մեծութիւնը, գեղեցիկութիւնը և գաղափարը, զոր Վատուած ամենայն խնամվագաւորած էր մարդոց սրտի մէջ, Կախանձը, կասկածը, անվխտահութիւնը և ատելութիւնը գոգցես բընական փոխադարձ յարաբերութիւններ եղան ազգերու և ժողովրդներու մէջ, և այս թշնամնական միտումները աւելի յաճախիցան իրարու դըրացի ազգերու մէջ: Տարակըս չըկաց որ տգիտութիւնը աւելի նպաստեց այն չարիքներուն: Վ ասն զի մարդիկ կ'երեւակայէին թէ՝ մինչեւ մի ազգչանկանի և չը կործանի, միւսը կարող չէ կանգնիլ և երջանկանալ, ինչ պէս որ վաճառականութիւնը թիւը գաղափարաւ ըմբռնողները կըկարծեն թէ՝ մէկուն հարստութիւն միւսին կորառեան մէջն է անշուշտ: Արշափ Յօրը նամանք է սոյն գաղափարը Վատուծոյ Կախախինամութեան դէմ: Բայց ուստի կարող էր ծնանիլ այսպիսի գաղափարը, եթէ ոչ սկզբնական անկեղծ հաւատոց ջնջումէն: Վ. անի մեծ յանցանք է այս գաղափարն ինքնին: Ուստի սրութիւն յառաջադիմութիւնը սկսած է արդէն փարատել այս նախապաշտումները, ազգազգի մօտեցնել և ժողովուրդ՝ ժողովրդեան: Բայց ինչպէս որ տգիտութիւնը միայնակ կարող չէր ժողովրդները իրար-

մէ բաժանել և խորշեցնել, եթէ Վուտությոց հայրութեան մէջ գանէին մարդդիկ իրենց փոխադարձ եղբայրութիւնը, նոյնպէս և լոկ կրթութիւնը կամ գիտութիւնը, մարդիկ միայն շահով իրարու հետ կապելով, կարող չէ ճշմարտապէս ընկեր առնել միմեանց՝ որը տոլ և հոգեւով, թէ տգիտութիւնը և թէ գիտութիւնը երկուքն ևս ան կարող են իրենց հակակիր ազդեցութեան մէջ։ Վահը, գիտւն գատուղութեանը ինքնին կարող չեն այնպիսի ընդհանրական եղբայրութիւն ստեղծել որ արտաքին պատճառներէ չը խախտի և չը թուշնայ, եթէ չունին կան խապէս այն ներքին և աստուածային սկզբունքը, որուն վրայ հիմնուած է եղբայրութիւնը։ Վատուծմէ հեռանարով կործանուած՝ եղբայրութեան գեղեցիկ չենքը՝ Վատուծոյն մօտենալով և սիրելով կը կանգնի և ոչ թէ լոկ գիտութեամբ։

Յառաջքան Յիսուսի Քրիստոսի գալուստը, որ, ըստ կանուխ մարդարէութեան, պարունակութեան, անհաշունացնել երկիրս երկնքի հետ ու և որուն կը պատկանէր համօրէն ժաղով ժողովոց, ու աշխարհը եւ մարդկութիւնը անհաշուն ցեղերու բաժնը ւած էր, որոց իւրաքանչիւրն, իւրեն զօրանալուն և երջանիկ ապրելուն համար, անշուշտ կարեւոր կը համարէր միւսները նոււաճել և արկարացներ (Օքարաղիկամայլպատանունը, ամեն երկիրներու մէջ, թշնամանաց տիտղոս և անիծից ու նախատանաց նշան եղուծ էր։ Նոյն խոկ Վատուծոյ ժողովրդեան կամ այլապատանունի մէջ այլ շրջանի մէջ, և ոչ ուրիշ ազգաց մէջ բայց Հրէից, գուցէ մարդ չհամարձակէր, իւր արդարութիւնը հըսչակելու գաղտնի յոււսով, հարցընել այսպէս բացարձակ։ Այլ է իմ ընկերն։ Այտածենք մի անգամ, որ հարցնողն սոսկական մարդ չէ, այլ վարդապետ օրինաց, վարդապետ օրինաց Վատուծոյ։

քեալն անգամ, որ նոյն ազգէն ծնած էր, սոյն կոչումը կուտար իւր ազգին՝ բարկութեամբ։ և արտասուօք Խրաւէ որ, մեր բացաարած կէտեւրուն նկատմամբ, Վատուծոյ ինքն պատարար մի կանգնած էր Հրէից և միւս ազգաց մէջ։ Բայց սոյն պատարար կամէր Վատուծոյ կռապաշտութեանէ անջատել Իսրայէլացիքը և ոչ թէ մարդկութենէն։ Վատուծոյ այս պարզ և սուրբ գիտաւորութիւնը այլապատճեան մոտաց մէջ։ Կրքայատնապէս ցոյց տուին իրենց վարքով, որ կարող են կռապաշտութիւնը սիրել և կռապաշտները ատել Նոյա մեծամուսութիւնը զրացած էր իրենց առ Վատուծոյ ունեցած անհաւատարմութեան հետ։ Որչափ կը խառնակէին նոքա այլազգեաց հետ, այնչափ կ'ատէին մարդկութիւնը։ Նեներողամտութիւնը և մէջկութիւնը միտոին կը զօրանոյին նոյցա մէջ։ Կարձաւենք, երբ Յիսուս Քրիստոս երեւեցաւ աշխարհի վրայ, ամեն ազգաց մէջ Իսրայէլացիք այն ազգն էին, որոց աւելի կարեւոր էր մեր բացաարած վում դասն, այսինքն մարդասիրութիւնի ՎՀ Հրէից պատմութեան մի այլ շրջանի մէջ, և ոչ ուրիշ ազգաց մէջ բայց Հրէից, գուցէ մարդ չհամարձակէր, իւր արդարութիւնը հըսչակելու գաղտնի յուսով, հարցընել այսպէս բացարձակ։ Այլ է իմ ընկերն։ Այտածենք մի անգամ, որ հարցնողն սոսկական մարդ չէ, այլ վարդապետ օրինաց, վարդապետ օրինաց Վատուծոյ։

(Վարուեակելէ)

ԿԱՐԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ա. Ռ. Ռ. Զ. Ա. Խ. Թ. Ե. Ս. Ն.

(Հարուճակութիւն, տես թիւ հ 1)

ԳԼՈՒԽ Բ.

Վարդակական վեպին :

Չիք ինչ ներհակ բնութեան
մարդոց եւ կազմուածոյ մարդկացին
մարմնոց քան նստողական կեանիքն :
Այս յայս դաս պարունակին նախ
բավանդակ իդական աեռք . և երկ
բորդ՝ ուր են բազմութիւն ձեւա
կերտաց , անդ մեծագոյն մասն արա
կան սեռու կաղմե վնատողական կեանու

Լըկրագործութիւնն է առաջին ,
ամենօդուատ և յոյժ առողջարար մի-
ջոց քան զայլ ամենայն գործառնու-
թիւնս : Իսկ յոյժ սակաւք հետե-
ւին այսմ , գոլով զհետ մտեալ առա-
ւել արդիւնարար միջոցաց , ամենեւին
անփոյթ լինին այս գլխաւոր և պիտա-
նի աշխատասիրութեան :

Ոքը կարծեն թէ երկրագործու-
թիւնն միայն չէ բաւական պատաղե-
ցուցանել զամենայն բնակիչս երկրի
և բառնալ զկարօտութիւն մարդկան ,
սխալին յոյժ , զի երկրագործութիւնն է
գլխաւոր միջոցն անական հարատու-
թեան , որպէս փորձիւ տեսանի . զի
ուր կարօտի մշակութիւնն , անդ տի-
րէ և աղքատութիւն և թշուառու-
թիւն : Չիք հաւասառութիւն վիճակի
տուրեւառողաց և ձեռակերտ աշ-
խատողաց . զի սյոօր հաղաքք հաղա-
քաց են զբաղեալ ՚ի գործ յաջող , և
՚ի վաղիւն անկեալ ՚ի վեսա , ՚ի կո-
րուստ , յաղքատութիւն և ՚ի թը-
շուառութիւն : Իսկ յոյժ ոչ է այսպէս
դրութիւն մշակողաց երկրի , զի ու-
տեն նոքա լիութեամբ զարդիւնս

փաստակոյ իւրեանց և լիուն զամբո-
նայն պիտօս կենաց , և են երջանիկ
քան զամենայն մարդիկ : Թէ և նատո-
զական գործառնութիւնք , որպիսի
են կօշկարութիւն , հիւանութիւն ,
գերձակութիւն , մամակազմութիւն ,
սոկերչութիւն , պատկերահանութի
և այլն , կարի հարկաւոր են յամենայն
տեղիս . բայց և չէ պարտ ումեք նու-
իրել զանձն իւր միանգամայն ՚ի սոյն
պիտիս ՚ի բոլոր կեսնու իւր . կարէ
և հնար իսկ է զբաղիլ և յայլ
գործունեայ աշխատասիրութիւնս , ո-
րավ ոչ երբէք վեսասի , այլ և օգտի
յոյժ . քանզի անընդհատ մեալ ՚ի նըս-
տողական գործառնութի ինչ պատ-
ճառէ մեծ ինչ վեսաս առողջութեան :

Ոչ վեսասի ոք նստելով յաւուրն ՚ի
հինգ կամ ՚ի վեց ժամն . բայց եթէ
պարտաւորեսցի նա նստիլ ՚ի տասն
կամ յերկոտասան ժամն , անկասկոծ
ախտագնեալ լիցի փութով :

Ոչ միայն ՚ի պակասութենէ կըր-
թութե վեսասին նստողական կեանք ,
այլ և ՚ի փակեալ օգոյց՝ զոր նոքա շըն-
չեն . քանզի հասարակօրէն տեսանի ՚ի
բազում տեղիս , յորս տասն կամ երկո-
տասան գերձակք կամ այլ նստողա-
կան աշխատասերք խմբեալ ՚ի միում
փոքրիկ առանձին սենեկի , ուր հազիւ-
է տեղի միոյ անձին աղատ շնչելոյ , և
յայսպիսի դրութե շարունակին նոքա
՚ի բազում ժամն ՚ի միում նուագի .
բազում անգամ ևս ձգի գործն մինչեւ
ցերեկոյ , յոր պարտաւորին վառել
զձրագունս , որոց ծուխ ապականեալ
զօդն , մեծ վեսաս պատճառէ շնչա-
ռութեան : քանզի օդն՝ որ անդրէն
ներշնչի , յոյժ վեսաէ պարզման թո-
քին , ուստի յաւաջ գայ լերդահազ
և այլ լանջային գանգատատ , ոքը գընեթէ
հասարակ են ՚ի մէջ նստողական ա-
րուեստաւորաց :

Նոյնպէս և աղտ! զի հօտ քրտանց բազմաց 'ի մի վայր գումարելց առաւել անառաջ առնէ զօդն, և վոսնդ տեղւոյն յօժ առաւելու, զի եթէ մին վնացանէ ունիցի զվատթար թսք կամ այլ վնասակար ախտ ինչ, և նորա սրբ մերձ առ նովու նստին, ստիպեալ շը՝ շել զնոյն օդ, անհնար է նոցա աղատ մնալ 'ի վոսնդէ :

Հազիւ երբէք գտանի, զի տասն կամ երկոտասանն ի նատողուկան արուեստաւորաց խմբեալ 'ի միում անձուկ տեղւոջ, իցն առներքեան քաջառողջք, զի եթէ մին ի նոցանէ իցէ ախտաւոր, յատկապէսըմբոնեալ 'ի թոքացաւութիւն, անկասկած փոխին ինմանէ և միւոյն. Օ այս տանմ և վասն այնց, որք նենցն խմբալին 'ի միում փակեալ սենե կի, զի եթէ իցէ 'ի մէջ նոցա հիւանդ կամ ախտաւոր ոք, լսու է անջատել զտեզի նորա, որ ոչ միայն բարի է վասն առողջացն, այլ և վասն հիւանդին իսկ :

Վ յնոքիկ' ոչք հետեւին նատողական գործառնութեց, որպիսի են կօշ կակորք, գերձակք, կորոցագործք, հիւանդ, և այլն, հասարակօրէն նստին միշտ կորացեալ գրութեամք, որ կալի վնասակար է. զի կորացեալ գրութիւնն խափանէ զամենացն կենաւեկան շարժւածս, և անկասկած մէջ վընաս պատճառէ առողջութեան : Օ ի այսպիսի արուեստաւորք միշտ ունին զգանդատ անմարազութեան, փքացաւութեան, գլխացաւութե, լսու ջացաւութե և այլն, որք յառաջ գան 'ի կորացեալ գրութենէ և 'ի պակասութենէ կրթութեանց. քանզի կերակուրն որ պարտ է ուղղորդութիւն 'ի գործողութենէ մկանանցն յառաջ վարիլ այլ այսպիսի գրութեամք ձընշեալ յաղիսն, պատճառէ անմարատթիւն, ողնդութիւն որովայնի, փքախ

տութիւն և ախտ ախոնդանաց, որք յաճախ են 'ի նատողական արուեստաւորա : Ուր չիք կրթութիւն, չիք և պատշաճապէս կատարումն կղկղանաց, և յաւելուածցթարախք՝ որք պարտին ընդ կղկղանացն արտաթորիլ, մնալով 'ի մարմնի, պատճառեն ոլեսպէս վնասակար ախտու :

Կորացեալ գրութիւն վնասէ նաև զմօքն, զի յորժամ այս գործարան ձնչի, ոչ կարէ օդն ազատօրէն մուտ տանել յամենացն մասունս նորին, և սիւել 'ի նա օդ ըստ չափու, յոր և գոյանան պալարք, որ և եղերի թոքացաւութիւն. թող զի և յորժամ այս գործարան վնասի, հիւթք մարմնոցն փութով աղականին և աղառի բոլոր կաղմուածն մաշղական ախտիւ :

Վ ստողական արուեստաւորք ձընշաղական գրութեամք ոչ միայն վնասնեն զաղիսն և զմօք, այլ և զներքին ամենացն մասունս մարմնոցն, զի շընառութիւնն արեան և հիւթոց 'ի սոյն մասունս խափանեալ պատճառէ նուագութիւն, որով և բազումք կորուսանեն միանդամայն զկարողութիւն ու տից : Վ ա և. 'ի պակասութենէ շընանի արեան և հիւթոց յառաջ գան բոր, բռու, ախտալից պալարք և այլ վնասակար ախտոք մորթոց, զըս բժշկելբազում անդամ անհնար լինի. միայն օդտաւետ միջոց բժշկութեան այսց են կամն կովու, բանջարք և կրթութիք 'ի բաց օդի :

Ո ճ պէտ և նստողական արուեստաւորք ստվորեալ գոլավ 'ի սոյն եղանակ վարելց զկեանս, ըունելով բնաւյօժարութիւն կրթութիւն, որ է գրեխաւոր միջոց պահպանելց զառողջութիւնն իւրեանց, ուստի և անհնարին է աղատ կալ 'ի վեր յիշատակեալ վտանգացն, բայց ես ոչ զանց արարից կարգել աստ զքանի մի պատշաճ կար-

գաղրութիւնս վասն այսպիսի սնեանց , առ ՚ի ազատ պահելոյ զինքետ նըս ՚ի պէսպէս վտանգաւոր ախտից , զբր յուսամ հաճեսցին նոքա բնդունիլ սիլ սիրով և կատարել ՚ի սրտէ :

Վրդէն նշանակեցաւ թէ , նըս տողական արուեստաւորք վեսասին ՚ի կորացեալ դրութենէ . վասն որոյ պարտին ամենայնիւ զգու չանալ , զի կամ կանգնեալ կամ ու զլորդ նառելով գործեսցեն , որչափ և բնութիւն գործառնութեց նոցին պահանջից կամ թոյլ տայցէ :

Վաեւ պարտին սոտէով փոխել զդը բութի նստելոյ իւրեանց , և ոչնստիլ ընդերկար ՚ի միում ժամանակի , այլ և երթեմն թողուլ զգործն և երթալ ՚ի ձեմել , հեծանել ՚ի ձի , վագել , կամ առնել զայլ գործունեայ զրօսանս , որով հնար իցէ զարթուցանել զկենասկան զօրութիւն իւրեանց :

Կորացեալ դրութիւն նստողական արուեստաւորաց է առաւելապէս ՚ի սովորութենէ քան ՚ի պարտաւորութենէ . քանզի հնար է պատրաստել աստ սեղան մի ըստ չափու գործագրացն , և նստիլ շուրջ զսեղանովն կախեալ ստիւք , կամ եթէ ցանկասցին՝ եղեալ զսասն ՚ի վերայ յենարանի , քան նստիլ ծնդածալ ՚ի գետնի , ուր և իւրաքանչեր անձին մարթէ յատկացուցանել զընդարձակ տեղի , յոր հնար լիցի նոցա հեշտութեամբ նստիլ ՚ի գործ , և շնչել ազատ առանց վեսանց միմեանց :

Վմենայն նստողական արուեստաւորք պարտին կարի զգուշութեամբ մոտագիր լինիլ մաքրութեան մարմնոյ , զգեստուց և տեղւոցն՝ ուր գործեն . քանզի նոցին դրութիւն , գործ և տեղի մեծապէս պահանջէ զայս . զի ոչ ինչ այնչափ նպաստէ առ ողջութեան նոցին , որչափ հաստատուն մտադրու-

թիւն մաքրութեան . և որ անփայլթ կայ սոյսմ , մեծ վիւսա պատճառէ առ ողջութեան իւրում :

Վստողական անձինք մեծաւ զգուշութեամբ պարտին պատրաստ կալ ՚ի գմուտրամարտ և ՚ի քումսու կերակրոց , և զբր ինչ կերիցեն , և ըմպիցեն մի իւցէ անժամանակ և անդր քան զշափն . Զի նոքա որք աշխատին արտաքրոյ տան , զբր ինչ և կերիցեն՝ զիւրեաւ մարտեն . բայց ոչ է այսպէս և ՚ի նասողական անձինս , վասն որոյ չէ պարտ նոցաւ տեւ ինչ կրկիննախ քան զմար մեն զտուաջինն . զի անմաքրութիւն ուտելեաց և ըմպելեաց պատճառէ սաստիկ և զերմն և այլ ախտը :

Վյապիսի անձինք խոնջեալ ՚ի վաստակրոց և առ ՚ի նորոգել զզօրութիւն իւրեանց , բարւորէ ժամ մի հեծանել ՚ի ձի կամ քայլել ուրեք ՚ի գաշտավորի , յորմէ առաւել օգուտոս գտանից ենքն քան ՚ի չերմ ըմպելեաց , զբր բազումք ՚ի նոցանի ստիր են սոտէով ՚ի կիր առնուլ . քանզի զօրաւոր ըմպելիք ներհակ են ամենեին ոյապիսեաց խառնուածոց , յորոց և պատճառի մեծ վեսա սուողջութեան :

Վշ յաւէտ քան զտմենայն օգուտ կար և արժանաւորագոյն կանսն պահապանելոյ զտուողջութիւնատողական կենաց՝ զի ամենայն ոք՚ի նոցանէ ձզիւ յամենայն առաւոտու նախ քան զերսներն ՚ի գործու իւր , ժամ մի կամ երկուս մշակեսցէ զկտոր մի գետնոյ իւր իսկ ձեռամբ , բրելով , փորելով , սերմանելով և մաքրելով զգետինն յանպիտան խոտոց . զայս առնելով նուիրէ անձին երկուս օգուտոս , մի՛ կրթութիւն և զքոսանս , որով պահանէ զառողջութիւնն , և միւսն՝ քազէ անտի զպիտոյս ինչ օրական ծախուց տանն , և ապա գնացեալ ՚ի գործ

իւր՝ կատարեցէ զայն առաւել ժըր
բութեամբ :

Աշխատին 'ի վերայ գետնոյ ոչ
միայն կրթէ զբոլը մասունս և զան-
դամս, այլ և հոռ գետնոյ և գալարեց
նորոգէ և զու արձացուցանէ զիենսա-
կան զօրութիւն մարմնոյ, և ուրախ և
հանգիստ պահէ զմիսա զուարձալի
զբաղմամբ :

Կրթութիւն որպէս և իցէ, յում-
մէ և իցէ, տիպապէս հարկաւոր է յոյժ
վասն առողջութեան, և որ անփոյթ
կայ այսմ, թէ և զերծ իցէ 'ի վտան-
գաւոր աթափից, սակայն չէ հնար նմա-
խկապէս վայելել անարատ և առողջ
կեանս, զի զգայ միշտ անկարութիւն
և խուլութիւն, որ առ սակաւ սա-
կաւ առաւելեալ իշուցանէ զնա 'ի
հող մահու :

ԳԼՈՒԽԻՆ Գ .

Ո-սո-հասիրական իւնաք :

Ու առ մնասիրական կեանիքն եւս
ենթակայէ միւն նոյն վտանգաւոր հիւ-
անդութեանց և պէսոպէս ախտից՝ որ-
պէս նասողական կեանիքն, զրոց ար-
դէն առացաւ 'ի նախընթաց գուխն,
այլ միայն յաւելու 'ի սմին խորաքննին
մուածողութիւն զծանր առարկայից,
որ առ աւել փութով մաշէ զիեանս
ուսումնասիրացքան զնասաղականաց.
Քանզի սաստիկ մուածողութիւնն յոր-
ժամպակասի իմարմնական կրթութէ,
հետևանիք նորա լինի կարի վտանգա-
ւոր : Փորձիւ գիտեմք, զի կարի ու-
շադիր պարապումն յումունս, 'ի
սակաւ ամս վեսա գործէ գերազանց ա-
ռայցութեան կազմուածոյ, պատճա-
ռելով ախտ ինչ ջղային, զոր բժշկել
անհնարինէ : Այս և բազումք 'ի ծաղ-

կամիթիթ հասակի սպատանեկութեան
զբաւին 'ի կենաց :

Այնչափ սաստիկ է զօրութիւն մը-
տաց 'ի վերայ ամենայն մասանց մարմ-
նոյ, մինչ զի 'ի դպրութիթէ բո-
վանդակ կենսական շարժումն փոփոխի
զի եթէ միտքն ուրախ է և զուարթ,
կարդ շրջանի արեան և հիւթոց պա-
հին կանոնաւոր, և ամենայն կղկղանք
և աւելքրդք մարմնոյ արձակին ըստ
պատշաճի, և մարդ վայելէ յառողջ
և 'ի քաջակորով կեանս : Այլ ուրիշէ
տարտամութի և խորախորհուրդ մը-
տածութիւն, անդ շրջան արեան
և հիւթոց, և կղկղանք և աւե-
լքրդք խափանին 'ի կանոնաւոր գործո-
ղութենէ իւրեանց. վասն որս մշտա-
տե. մուածողք հազիւ երբէք վայելէն
զառողջ կեանս, կամ ստանան ոգի զօ-
րութեան, այլ որք հեռի են 'ի մտա-
ծողութենէ և կեանս միշտ ուրախ և
զուարթ մտք, անկասկած վայելէն
զերկուան եւս :

Ոքք անդադար մուածողութեամբ
անցուցանեն զիեանս, 'ի փոքր ամս կո-
րուսանեն միանգամայն զյիշողակա-
նութի մտացն, և յառաջ գայ սեա-
մաղձային ախտ, որ ապականէ զե-
րեակայութիւնն և հետևեի ջղային տը-
կարութիւն :

Դերագայն փորձ կատարելութե-
ուսումնասէր անձանց 'ի պահպանել
զառողջութիւն իւրեանց, է ստէպ և
'ի գէպ ժամու աղատ պահել զմիտռն
'ի խորաքննին մուածողութենէ, տա-
լով զինքեանս ուրախ ընկերակցութե-
և զուարձալի և գործունեայ զբօսանաց:

Փոխանակ ձեռնարկանելց 'ի քըն-
նել զբնութիւն յարակցութեան, որ
կայանայ 'ի մէջ մտաց և մարմնոյ, կամ
'ի խնդրել զեղանակն, սրավ նոքա փո-
փոխ ներգործութեամբ օգնեն իրե-
րաց, Այշեսցուք միայն զախտան, առ-

որսուսումնասէքք մասնաւորապէսըն՝
դունակէն, և ջննասցուք կարգել զմի.
Ծոցն, որով հնար իցէ արգելուլ զայն:

Ուսումնասէքք յոյժ ենթակայ են
յօդաշաւութեան, որ է տաժանելի
ախտ մի, որ գլխաւորապէս յառաջ
գայ յանմարսութենէ կամ յարգել
մանէ. քրոսնց :

Քանզի յայտ իսկ է, զի որ յառա-
ւոտէ սկսեալ նստի մինչև ցերեկը,
անհնար էնմա դիւրեաւ մարսել զիե-
րակուրն, կամ վարել արտաքս զյա-
ւելուածս մարմնոյ ըստ կերեալ կերա-
կրոցն, իսկ թարախք՝ որք պարտին ար-
տաթորիլ քրտամբք, մնան ՚ի մարմնի.
Նոյնպէս և հիւթք և շրջան արեան մնան
անկատար՚ի պատշաճ գործադրութիւ-
իւրեանց, ուստի հետեին պէսպէս
անողջանալի հիւանդութիւնք :

Վաեւ ուսումնասէքք որպէս և նըս-
տողական արուեստաւորք կարի ըն-
դունակ են քարի և խճի յերիկամու-
նըս կամ յերկուորիս, այլ եթէ է մի
ջոց բժշկութեան այսց, է մի միայն
կրթութիւնն ՚ի ձեռն սուէլ միզման .
Քանզի նստողական անձնիք յոյժ սա-
կաւ. միզեն, քան որք կրթեն զանձնս
ձեմելով կամ հեծանելով ՚ի ձի : Այլ
և ստէպ կամ յորդ միզումն ոչ մի
այն սակաւ առ սակաւ ՚ի գուրս վա-
րէ զքարն կամ զիսիձն, այլ և բազում
ախտից արգել տայ :

Վյոպիսիք որք ոչ փոյթ սանին
պատշաճ կրթութեան, ենթակայ են
դեղնութեան, անմարսութեան, պա-
կասութեան ախորժակի, մաշման մար-
մնոյ, աւերմնն էրդին և յորդութե
մարզուի, որք պատճառին յարգելմանէ
պատշաճապէս կատարելոց վլըզիլանս
աւելուածոց և հիւթոց մարմնոցն :

Աչնէ այնչափ սաստիկ նպաստէ
ջղային ախտից, որչափ սաստիկ մոա-
ծողութիւնն, որ ոչ միայն վրդավէ ըզ-

բովանդակ կազմութիւն մարգոյ, այլ
և վնասէ կենսական շարժողութեանն,
անառ ողջ առնէ զերեա ակայութիւնն
և ակարացուցանէ զմիոսն : Վասի է
զի բազում անգամ անհնարին թաղ-
ծութիւն և երբեմն ևս խելագարութիւն
տիրէ ՚ի պարապոզոն ՚ի կարի գժուա-
րին յուսմունս գրականութեան :

Չիք այնպէս մահագուշակ հիւ-
անդութիւն ուսումնասիրաց, որպէս
թարացաւութիւնն, զորմէ արդէն յի-
շատակեալ եմք, թէ այս գործարան
չկալ է ըստ արժանւոյն տարածիլ յայ-
նըս, որք չունին զպատշաճ մարմնա-
մարզութիւն և ոչ փոյթ տանին ուղղորդ
դրութիւնստելոց, քանզի յայտ իսկ է
զի սէք ընթեռնուն կամ գրեն, սովոր
են միշտ կորանալ ՚ի վայր, և բազում
անգամ սե զմանիք լանջացն ընդ սեզա-
նոյն մնան ընդերկար, որով ոչ
միայն վնասի թօքն, այլ և սիրոն իսկ,
և սովոր լանջացն :

Վիհնար է ումեք վայելել զկատա-
րեալ առողջութիւն, որ ոչ պատշա-
ճապէս մարսէ զկերակուրն, քանզի
սաստիկ մտածողութիւնն և անգագար
պարապումն ՚ի ծանր ուսմունս, բառ-
նայ զզօրութիւն մարսողութեան, և
յապականութենէ հիւթոյն պատ-
ճառինուաղութիւն, խուլութիւն և
վնաս բոլոր կազմութեան մարմնոյ :

Բնդերկար և խորաքնին մատածո-
ղութիւնն պատճառէ եւս սաստիկ
գլխացաւ, պտոյտ գիսոյ, կաթուած
կամ անգամագօսութիւն և այլ մահա-
ռիթ հիւանդութիւնն : Վարեգոյն մի-
ջոց աղատ մնալոց յայտ զմնդակ սիս-
տից՝ է ոչ ընդերկար պարապիլ յու-
սումն ՚ի միում նուագի : և պահել
զանձն ՚ի կանոնաւոր կեցութեան, ե-
թէ պատշաճ կերակրովք և կրթու-
թեամբ, և եթէ երբեմն թեթև լու-
ծողական գեղօրէիւք :

(Վարունակութիւնն)

ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐԸ

(Հարուսակութիւն : տես թիւ 3 :)

Երեք աւուր յետոյ նամակ մը ըստացաւ Արբազան Պատրիարքն Վալի Փաշայի հրամանաւ գրուած , որով ըւր կուտար թէ , Այօն լերան փրայ հայոց ազգին գերեզմանատան վերաբերեալ բոլոր թղթերն հետն առնելով՝ Յունաց վոնքը բարեհաճի երթալ այս ինչ ժամանւն :

Նշանակեալ ժամանակին գնաց Ա . Պատրիարքն առանց թուղթ մի հետք տանելու : Հոն դատաւ նաև Դամակասի Գաղղիոյ Պ . Հիւպատոսն Վամի . Վալի Փաշային և Այսուի է ֆէնտիին հետ : Օկնի սովորական խօսակցութեան ըստ Կորին Վամութիւնն , Բաթրիք է ֆէնտի , ինչպէս անցեալ օր յատկապէս խնդրեցիլ , թէ քանի որ որ քաղաքս եմք , Այօն լերան փրայ ձեր և Լատինաց մէջ եղած գերեզմանատան վէճին ալ նայինք , և մենք ձեր խընդ բանաց զիջանելով խօսք տուած էինք երկու կամ երեք աւուր յետոյ լուր տալու . ահա այսօր ձեզ լուր տըրւեցաւ որ նոյն տեղի վերաբերեալ բոլոր թղթերը առնեք գայք . ահա Պ . Հիւպատոսն ալ հսուներկայ է | ատինաց կողմէն . ուրեմն հաճեցէք ձեր նոյն տեղեաց վերաբերեալ թղթ թերը հանել որ տեսնեմք թէ ինչ են , և ձեր մէջը ծագած անհամաձայ նութեան պատճառը Բնէչ է :

Անդրած թղթերդ չերի , ըստ Արբազան Պատրիարքն . և | ատինաց հետ ալ մեր ունեցած անհամաձայ նութեան պատճառը ուրիշ բան չէ , միայն մեր իրաւանց յափշտակութիւնն է | ատինաց կողմէն , որում կը նպաստէ Տէրութեան կողմէն եղած թղթարութիւնները , զոր ան-

ցեալօր մի ըստ միոջէ պատմեցի ձեր Վամանւթեան , զորս կրկնել աւելորդ կը համարիմ :

“ Ինչո՞ւ համար չըերիք ձեր թղթ թերը և պատճառը Բնէչ , ըստ Արբին Վամանւթիւնն . հապա Բնէչպէս դատ պիտի վարեք , քանի որ ձեռքերնիդ անոր վերաբերեալ թղթերը չունիք . ըսելէ թէ դատելնիդ պիտի կորանցընեմք , որ ամենայայտնի իրաւունքնիս է , և ոչ ալ ձեր Վամանւթեան ՚ի զուր տեղը հոգնութիւն պիտի տամք . քան լիցի . միայն խընդ զրեմ , Վամի . Տէր , խնդիրը ասդին անդին չձապաղի օտար խնդիրներ մէջ բերելով , ինչպէս որ քանիցս անգամ տեսաք Պարանչիւկեանց ըրած շարժումները . և այս խնդրոյս մէջ անոնց ըրածը այնքան յայտնի անդիրաւութիւն է , ինչպէս վերը փոքր ինչ յիշուեցաւ , որուն համար այսօր եթէ մենք չըողոքենք , ՚ի վաղիւ քարինք պիտի աղմ զակեն . ինչպէս յայտնի տեսաք Ա . Յակովլեայ , քառասնից Ա . Արին , և ուրեմն Օննդեան տեղեացն , և ուրիշ խնդիրներաւ մէջ . նոյնպէս այս գերեզմանատան խընդրոյն մէջ Արանչիւկեանք ղմեզ յանհնարինս վշտացուցած են և կը վշտացընեն միշտ . Այս իրաւունքը այնքան արդար ու ճշմորիտ է որ՝ ուրանալու համար մարդ առանց խղճի ըւլալու է . Ի հարկէ կը լիշէք , Վամի . Տէր , անցեալ օր այս գործը իմ հետո դատ վարելու պաշտօն ունեցող Պ . Հիւպատոսին յանձնեցի իմ կողմէս

ձեր Վ սեմութեան ներկայութեանը ,
և ըսի թէ ես ձեր հետք զպիտի գամ .
դուք առանձինն օր մը Պ . Հիւ .
պատոսն ալ հետերնիդ առնելով այ
ցելութեան ելքը դնել ձեր հարա
զատ հպատակ Հայոց ազգին սեպհա
կանութեան բանաբարութիւն աւս
նելու համար , ուր Լ ատինք հիւսիսա
կողմը թագաւորական արդար պողո
տայ ունենալով , որ աւելի յարմար .
աւելի մօռ և աւելի դիւրին է իրենց
անկէց դուռ շրանալով , անիրաւա
բար՝ չասացից թէ բռնի . և այն եր
կու դուռը մէկ տեղ բանալով՝ մեր
սեպհական գերեզմանատան վրայ ,
զմեղ միշտ ոտքի տակ առած են , և
